մի՝ վերը յիշած յիշատակարանին ցուցած ճամբովը՝ այժմեան Թէոդոսիոյ արևելեան ծայրէն (արգելանոցին կողմէն) սկսելով՝ սարերուն վրայէն անցնի երթայ 'ի Սուրխաթ (Հին-Ղրիմ), և անտի անտառաց միջէն և սարերուն վրայէն դէպ 'ի Ղարապազար (Խարասու), անձամբ կարող է ստուգել յիշատակարանիս վաւերականութիւնը։ Վասն զի այդ ճամբուն վրայ գրեթէ յամենայն քայլափոխի կը գտնայ հին հայրենի յիշատակաց ցանկալի՝ մանաւանդ և ցաւելի՝ մնացորդքը. անտառաց մէջ, սարերու ծայր ամրակուռ եկեղեցիք, անապատացեալ վանքեր, տխրատեսիլ գերեզմանոցք՝ սևացեալ և մամռապատ քարերով, 'ի միջի որոց մեծ խնամքով փորուած և քանդակուած խաչքարինք մեսրոպեան տառերով։

Տեղ տեղ մեր նախնեաց տանուտէր իշխանաց և բարեպաշտ տիկնանց և օրիորդաց Նուր-Մելէքներու և Կուսիկեանց շինել տուած ականակիտ աղբերք՝ կ'անցընեն ճանապարհորդին ծարաւը, և այլ ուրեք մեր պապերուն խնամով տնկուած և մշակուած պարտէզներն՝ դեռ ևս կ'ընծայեն առատապէս քաղցրահամ պտուղներ։

Ի մօտաւոր անցելում՝ Տաւրիոյ հայաբնակ և հայախօս քաղաքներն և աւաններ, այժմ այլալեզու ժողովուրդք կը բնակին։ Կէաք-Թէփէ, Նախջուան (այժմ Քռիմիչքա), Սուլթան-Սալա, Թօփլու, Օրդալան, Խշլաւ, Սօվուք-Սու, երբեմն մեծամեծ հայաբնակ աւաններուն մէջ, այժմ բնաւ հայ չկայ. Մողկան[1] և Քեմճակ (Գամճակ) վանքերն՝ այժմ բոլորովին անապատացել են. Կազարաթ, մեծ գիւղը

1. Մողկան՝ Խշլաւ գիւղին մէջ վանք էր Հայոց. Քեմճակ, Հին-Ղրիմու անտառին մէջ, եկեղեցին՝ Ս. Աստուածածին։